


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄՂՃ.
Պաշտոնաց 10 ՄՂՃ.
Վեցամս. Կ. Պոլսոյ 4 ՄՂՃ.
Պաշտոնաց 5 ՄՂՃ.
Օտար երկրներու 50 Պժ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դրշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Խրատքանչիւր թիւ 2 դրշոց թուղթ.



ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուռն գնացած լրագրաց ծանու-
ցմանը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի : Ղալա-
թիա Սանտրոքընար շատուէն թիւ
198, Նօրօ խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յօդուած, եւ
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 9 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Աւստրո-թուրքական պայմանադ-
րութիւն մը կը քննարկուի համար մայրա-
քաղաքի մէջ շարունակեալ բանակ-
ցութիւնը տակաւին չկրցին յաջող
վախճանի մը հասնիլ, և կը վախճուի որ
թուրք-չեքիական բանակցութեանց
բաղդին հանդիպին :

Մէմօրիալ Տիրօմաթիք լրագրին
տուած տեղեկութեանց նայելով, ա-
ռաջագրեալ պայմանադրութեան գէ-
տած գծաւորութիւններն հետեւեալ
երեք կէտերուն վրայ են : Նախ՝ Բ.
Դուռն կը պահանջէ որ գրաւեալ դա-
ւաւայ վրայ Վեհ. Սուլթանին գե-
րիշխանութիւնն առաւել բացարձակ
կերպիւ հաստատուի առժամանակ-
եայ դաշնագրին մէջ, որ կըսէ թէ
պայմանադրութիւնը Վեհ. Սուլթա-
նին Պոստիոյ և Հերէքի վրայ ունե-
ցած գերիշխանական իրաւունքը չը
նախագատեր, և թէ այդ դաւաւ-
ներն առժամանակեայ կերպիւ միայն պի-
տի դրաւին Աւստրիական զօրքն :
Թուրք պատուիրակները կը պնդեն,
որ նախագատել բառին տեղ ըսուի թէ
բնաւ չարքիւր Սուլթանին գերիշխանու-
թեան վրայ զատ առժամանակեայ բառն աւե-
լի սահմանադրել կուզեն :

Երկրորդ, Բ. Դուռն կը փափաքի
որ թուրքիոյ մէջ ուղեւորութիւն ընող
կամ բնակող Պոստիոյ վրայ անձնական
իրաւանց տեսակէտով Օսմանեան հը-
պատակներէն տարբերութիւն չունե-
նան : Հետեւեալ Աւստրիոյ հիւստ-
տոաց պաշտպանութեան չկրնան դի-
մել : Վերջապէս, Օսմանեան կառա-
վարութիւնը կը պահանջէ որ Նօվի-
Պադարի գաւառին գլխաւոր քաղա-
քաց մէջ պահապան զօրք դնելու Ի-
րաւունք ունենայ : Իսկ Աւստրիա իս-
ռն պահապան զօրք դնելու միայն
հաւանելու տրամադրել է : «Այս կէ-
տերուն վրայ երկար վիճաբանութիւնը
կ'սպասուի, որոյ վախճանը կարելի
չէ նախատեսել» կըսէ Մէմօրիալ :

Ուրիշ լրագիր մ'ալ կըսէ թէ «այս
տաժանելի բանակցութիւնը գծաւ-
րաւ կրնան դործնական արդիւնքի
մը յանդիլ, քանի որ խնդրոյն հիման
վրայ կատարեալ անհամաձայնութիւն
կը տեսնեն : Թուրքիա այդ երկու նա-
հանգները պահել կուզէ. իսկ Աւստ-
րիա իւր երկրին հետ միացնելու կը
նկրտի : »

Հեռագիրը քանի մ'օր առաջ ծա-
նոց թէ Աւստրալի կոմսը պատուիրա-
կութեանց առջև արտասանած մէկ
ատենախօսութեան մէջ սուտ հաներ
է այն լուրը թէ Աւստրիա և Ռուսիա
Ռուսիան իրենց մէջ բաժնելու

միտք ունին : Այս լուրն հրատարա-
կողը գլխաւորապէս Է. Կէրթէս անուն
Հունգարական թերթն էր, որ իւր
մարտ 2 թուոյն մէջ առանց ստուգու-
թեան երաշխաւորելու ծանուցած
էր թէ Աւստրիոյ և Ռուսիոյ միջև բա-
նակցութիւնը կը լինին Ռուսիոյ
բաժանման համար : Ռուսիա՝ Մօլտա-
վիան և Տօպրուքան պիտի ստանայ
եղեր, Հունգարիա ալ՝ Վալաքիան :
Այս զրոյցները, զորս Աւստրիոյ և Ռու-
սիոյ կառավարութեանց Ռուսիոյ
նկատմամբ բռնած դարմանալի ըն-
թացքը հաստատել կը թուի, Պուր-
թէի մէջ մեծ մտահոգութեան առթիւ
եղած են, մանաւանդ այն պատճա-
ռաւ որ, ինչպէս յայտնի է, Պիդմար
իշխանն Աւստրիան միշտ գէպ յԱրե-
ւելս կը մղէ, որպէս զի Գերմանիոյ
կողմէն երկար ժամանակէ ի վեր բաղ-
ձացած փոխարինութիւնները ձեռք
ձգէ :

Երկուշաբթի օրն եկած Հալասի
հեռագիրը մը կը ծանուցանէր թէ
Պիդմանիոյ սահմանադրութիւն վրայ Անգ-
ղիական զօրք համախմբուելու և Հընդ-
կաստանի կառավարութեան կողմա-
նէ Պիդմանաց թագաւորին վերջնա-
գիր մը զրկուել է : Այս նկատմամբ
տակաւին նոր լուրեր չունիմք, բայց
Անգղիոյ երեսփոխանաց ժողովոյ մարտ
6ի նստին մէջ Հարթիսկընի մարքի-
զըն հարցուց թէ ճշմարիտ է որ Պիդ-
մանիոյ մէջ ծագած անկարգութեանց
պատճառաւ Անգղիական զօրք ունեղ-
մը զրկուած է անդ : Ելուամից նա-
խարար Սըր Սթաֆօրտ Նօրթօթթ պա-
տասխանեց թէ այս մասին տեղեկու-
թիւն չունենք, և Հընդկաստանի դուր-
ծող նախարարութեան պաշտօնատան
մէջ ալ տեղեկութիւն ունեցող չկա-
նալորդ : Նստին, այն է մարտ 7ին,
Հընդկաստանի դուրծող նախարարու-
թեան խորհրդական Պ. Լուչէր ըսաւ
թէ Հընդկաստանի փոխարքայէն հե-
ռագիր մ'եկած էր ծանուցանող թէ
Պիդմանիոյ մէջ պատահած անկար-
գութեանց պատճառաւ հարկ դաւա-
ռած է երկու գունդ երկարացի և
գունդ մ'ալ Անգղիացի զօրք զրկել
Անգղիական Պիդմանիա : Կըլիչէն ըն-
թերցողը թէ Պիդմանիոյ նոր թագա-
ւորը գահը նստածին պէս թագաւո-
րական գերդաստանին անդամներէն
չատերն ինչպէս նաև հին նախարար-
ներն սպաննել տուած էր, և ասով մեծ
ստրաստի տրած էր Պիդմանիոյ ժո-
ղովրդեան վրայ : Կերելի թէ Պ. Լու-
չէրի ծանուցած անկարգութիւններն
այս կոտորածներուն հետեւանքն եղած
լինին :

Պերլինէն Անգղիական Բէլ Մէլ
կողմէ լրագրոյն քաջաւած հեռա-
գիր մը կը ծանուցանէ թէ տեղու-
թեանց մեծ ամսանոթութիւնը նոր դե-
մարտ 2 թուոյն մէջ առանց ստուգու-
թեան երաշխաւորելու ծանուցած
էր թէ Աւստրիոյ և Ռուսիոյ միջև բա-
նակցութիւնը կը լինին Ռուսիոյ
բաժանման համար : Ռուսիա՝ Մօլտա-
վիան և Տօպրուքան պիտի ստանայ
եղեր, Հունգարիա ալ՝ Վալաքիան :
Այս զրոյցները, զորս Աւստրիոյ և Ռու-
սիոյ կառավարութեանց Ռուսիոյ
նկատմամբ բռնած դարմանալի ըն-
թացքը հաստատել կը թուի, Պուր-
թէի մէջ մեծ մտահոգութեան առթիւ
եղած են, մանաւանդ այն պատճա-
ռաւ որ, ինչպէս յայտնի է, Պիդմար
իշխանն Աւստրիան միշտ գէպ յԱրե-
ւելս կը մղէ, որպէս զի Գերմանիոյ
կողմէն երկար ժամանակէ ի վեր բաղ-
ձացած փոխարինութիւնները ձեռք
ձգէ :

պանախորհրդոյ մը գումարումը չեն
ուղեր, և առանձին բանակցութիւննե-
րը նախապատիւ կը համարին :

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՊՈԼԻՂԱՐԻՈՅ
(Երաշխաւորութիւն Բէլ 2271)

115. — Երբ Աղգային ժողովը չկա-
րենայ գումարել և արտաքոյ կարգի
ծախք մը հարկ լինի նախորդ տար-
ուան պիւտճէն հիմ կը բռնուի նա-
խարարաց պատասխանատուութեան
ներքէ մինչև որ եղած անօրինութիւ-
նը յաջորդ ժողովէն ընդունուի :

116. — Ու է փոխաւորութիւն չը
կրնար կնքուիլ առանց Աղգ. ժողովոյ
հաւանութեան :

117. — Երբ կառավարութիւնը
փոխաւորութեան մը հարկ տեսնէ, կըր-
նայ Աղգ. ժողովն յարտաքոյ կարգի
նիստ հրաւիրել :

118. — Եթէ Աղգ. ժողովը չկարե-
նայ գումարել, իշխանը նախարարաց
և պետական խորհրդոյ հաւանու-
թեամբ կրնայ կնքուելիք փոխաւոր-
ութեան գումարն որոշել՝ այն պայմա-
նաւ որ յառաջիկայ Աղգ. ժողովն ըն-
դունի այս անօրինութիւնը :

119. — Քուէարկեալ վարկերուն
մէջ չպարունակուած ծախուց համար
իշխանը կրնայ տեղութեան գանձէն
գումար մը պահեստի դնել՝ այն պայ-
մանաւ որ ետքէն որոշուելիք գու-
մարը չանցնի :

120. — Իշխանը պարտի Աղգ. ժո-
ղովը գումարել ամեն տարի՝ գումար-
ման ժամանակն և նիստերուն չըջանին
տեղութիւնն որոշելով, բայց կրնայ
նաև Աղգային ժողովն յարտաքոյ
կարգի նիստ հրաւիրել երբ հարկ
լինի :

121. — Իշխանը գումարման տեղն
ալ կորցնէ հրաւիրման հրամանագրին
մէջ :

122. — Նիստերու կանոնաւոր չըը-
ջանները կրնան երկարաձգել իշխա-
նին և Աղգային ժողովոյ հաւանու-
թեամբ :

123. — Իշխանը կը բանայ և կը փա-
կէ նիստերուն չըջաններն անձամբ
կամ օրինաւոր պատուիրակի մը մի-
ջոցաւ :

124. — Նիստերուն չըջանին բացու-
մէն առաջ անգամը պարտին երդում
տալ Սահմանադրութիւնը պահպա-
նելու և իշխանին ու ժողովրդեան
բարօրութիւնը միայն փնտելու :

125. — Կրկին անգամներ երդում
չեն տար, բայց հրապարակաւ կը
խոստանան նոյն ընթացքը բռնել :

126. — Իշխանը, նիստերուն չըջանը
բացած ժամանակ, երկրին կացու-
թիւնը կը յայտնէ, և աղգային ժողո-
վոյ ներկայից օրինաց ծրագրերը կը
ծանուցանէ :

127. — Աղգային ժողովը պատաս-

խան մը կը ներկայէ իշխանական ճա-
ւին :

128. — Աղգային ժողովը գումար-
րելէ յետոյ, իշխանը կրնայ նիստե-
րու չըջանն երկարաձգել, բայց ա-
ռանց աղգային ժողովոյ հաւանու-
թեան՝ երկու անգամէն աւելի եր-
կարաձգում չկրնար լինիլ :

129. — Իշխանը կրնայ Աղգային
ժողովը լուծել, և ուրիշ ժողովոյ մը
համար նոր ընտրութիւն որոշել :

130. — Նոր ընտրութիւնները պէտք
է կատարին 4 ամսուան մէջ, և նոր
Աղգային ժողովը՝ լուծուածէն մինչև 6
ամիս յետոյ գումարի :

131. — Աղգային ժողովոյ անգամը
չեն կրնար նիստերու չըջան հրաւի-
րել առանց իշխանին հրամանին, և
լուծման մը պատճառաւ չըջանի մը
փակուելէն յետոյ չեն կրնար նիստ ը-
նել :

132. — Նիստերուն տեղի ունեցած
քաղաքը չնստող անգամը իրաւունք
ունին իրենց բնակութեան ժամանա-
կին՝ ինչպէս նաև նիստերու չըջանին
բացման և փակման ժամանակ երթե-
ւեկութեանց ծախուց համար հա-
տուցում ստանալ : Այս ծախուց գու-
մարն օրէնքով պիտի որոշուի :

133. — Սահմանադիր ժողովն իշ-
խանին կամ խնամակալութեան և
կամ նախարարաց խորհրդոյն հրա-
ւիրմամբ պիտի գումարի :

134. — Իշխանը սահմանադիր ժո-
ղովը պիտի գումարէ հետեւեալ պատ-
ճառաց համար . 1՝ երկրին սահմա-
նագլխոյ փոփոխութեան վերաբեր-
եալ խնդրոց համար . 2՝ կաղմական
սահմանադրութիւնը բարեփոխելու
համար : Այսպիսի առաջարկ մ'ըն-
դունելու համար ժողովին երկու եր-
րորդ մեծամասնութիւնն հարկ է :

135. — Սահմանադիր ժողովը կը
գումարի խնամակալութեան հրաւի-
րանօք սահմանադրուող փոփոխու-
թեանց վրայ խորհելու և որոշում տա-
լու համար : Այսպիսի առաջարկ մ'ըն-
դունելու համար մեծամասնութեան
քուէն հարկ է :

136. — Նախարարաց խորհուրդը
սահմանադիր ժողով կը գումարէ նոր
իշխան մ'ընտրելու համար՝ երբ դա-
հը թափուր մնացած է ժառանգ չը
գտնուելուն պատճառաւ . ներկայ
անգամաց երկու երրորդը կը բաւեն
ասոր :

137. — Սահմանադիր ժողովը պի-
տի կաղմուի սովորական Աղգային ժո-
ղովէն, վրան աւելնալով այն եպիս-
կոպոսները, դատաւորներն և այլ
պաշտօնատար, որք Աղգային ժողո-
վոյ անգամ չեն, բայց այդ ժողովոյն
մէջ ներկայացեալ դատուց կը վերա-
բերին, և Աղգային ժողովոյ մէջ նըս-
տող ընտրեալ երեսփոխանաց թիւը
պիտի կրկնապատկի : Այս վերջինները
պիտի ընտրուին այն եղանակաւ՝ որով

Ա. Արեր ուսեալ երկուստարդք զլիւս
 Եւրապայ երկու գործերով կղապին, զը-
 րազըրութեամբ կամ առեարով : Արդարեւ
 չենք կրնար ուրանալ թէ փաճառականի
 կամ իրաւարարն մը իրը գրադար ծառա-
 յողք չարանակ զրազեալ են . բայց նաև
 չենք կրնար ուրանալ թէ դեռ նոքա փա-
 ճանակ կրնան գտնել իրենց մշակու-
 թեան համար : Թէ և դուք են այժմ
 զպրոցականի մը պատեհութիւններէն ,
 բայց դեռ փաճանակ ունին ամեն օր նո-
 յաւելանա՞ծ մը ընելու իրենց ծանոթութե-
 թէ՛նաց դանձուռն մէջ : Եթէ՛ այս երկ-
 աստարդք ուչաղութեամբ քննեն իրենց

անհնարեալ զբաղումներն, և թէ ինչպէս անցնուցած են օրուան մը ժամերը, անհուշող պիտի գտնեն թէ բազում վայրկեաններ և մինչև իսկ ժամեր անդադար ալ չեն անցնում երբ Գիտի գտնեն թէ պատեհութիւններ ունեցած են, բայց զայն անօգուտ նպատակներու համար գործածած են:

Բայց զբաղութեամբ զբաղող երբ տեսարարը դեռ ուրիշ պատեհութիւններ ունին իրենց մշակութեան համար աշխատելու: Առհասարակ մեր ազգին մէջ կը կարծուի թէ մտաւորական աշխատութեան համար յատկացեալ ժամանակը միայն ցերեկն է, և թէ յարմար կամ ներքին չէ զիջելուան մէջ իրենց մասն ալ նպատակին համար գործածել: Արդարեւ նա որ բոլոր օրն կաշխատի իւր սովորական գործով, ալ տը ունի ընտանեկան կամ ընկերական կազմութիւնը զուարճութեանց, բայց այս զուարճութիւնը պարտին տաճանաւոր ըլլալ, այնպէս որ չար գիւրդն զմեզ իրենց նաև մեր անձին մշակութեան համար աշխատելու:

Եւրոպական և այլ բարեկիրթ ընտանեաց մէջ խիստ զեղեցիկ կանոնաւորութեամբ կան զուարճութեան և աշխատութեան ժամերն: Ընտանեկան զուարճալի և օգտակար խօսակցութիւններէ և խաղերէ վերջ ընտանեաց իւրաքանչիւր անդամ կառանձնաւայ իւր սենեակն, և զուարթ մտքը կուտան: Այսպէս նիւթական զուարճութիւնները միտայնելով մտաւորականին հետ՝ զբաղման քաղաքական աշխարհի հետ հաղորդակցութիւն կունենան և միշտ կը յաւելուն իւրենց ծանօթութիւնները: Այն երիտասարդը, որը հազիւ մի քանի վայրկեաններ կը գտնեն ընթերցման համար, կրնան գոհացողիք օրատեհութիւն ունենալ, եթէ զիջելով ժամեր օրուան մասն նաւորապէս իւրենց անձնական մըշակութեան նուիրելու:

Նաև ուրիշ միջոց մ'ալ կայ, զոր իւրաքանչիւր երիտասարդ կրնայ գործածել: Ճշմարիտ է թէ նոքա օրն օրն իրենց կ'զբաղին աւելի ալեւոր ունին քնոյ իրենց կ'զբաղին զուարթութեամբ կազմութեամբ համար, բայց այս նպատակին համար եօթն կամ աս առաւելուն ութ ժամը բաւական է, և հարկ չէ անկողնոյն մէջ փակուիլ մինչև որ արեգակն հորիզոնին վրայ բարձրանայ: Առտի առողջութեան օրինաց հակառակ գործած չեմք ըլլալ՝ եթէ առաւելները կանխաբանելով ընթերցման պարապմունք: Այն երիտասարդը, որը կը ցատի թէ ցերեկը ժամանակ չունի, ո՛րչափ մեծ անեծ գործեր կրնան կատարել, եթէ ամեն առաւել կանոնաւորապէս ժամ մը կամ աւելի գործեն իրենց անձին մշակութեան համար:

Բայց այն երիտասարդը, որը առեւտրով կ'զբաղին, այս միջոցներէս ցատնաև ուրիշ պատեհութիւններ ունին: Սոքա միշտ զբաղեալ չեն, այլ յաճախ կը դադարեցնեն անձկութեամբ սպասել յայտնաբերել մը՝ գէթ օրական մը հայթայթելու համար: Բայց ինչպէս կանցնին նոցա անգործ ժամերն: Յաւալի է ըսել թէ ի զուր և անօգուտ խաղեր կամ խօսակցութիւնը կը գրաւեն այն ժամկալին ժամերն, որը կրնային արդիւնաւորել շահաւէտ գործածութեամբ:

Խիստ տակաւ պիտի ըլլային այժմ ժամանակի համար եղած դանդաղանքներն, եթէ մարդիկ իրապէս զիտնային նորա կարեւորութիւնն և զայն գործածելու աւանդները ուղիւ եղանակը: Յաճախ մարդիկ անհարմար կը մնան, որովհետեւ կը կարծեն թէ ժամանակ կամ կարողութիւն չունին, մինչդեռ իրենց ջանքը մը կրնայ զնոսա շարժել: Առտանօր աւելորդ չեմ համարիր յառաջ ընթել օրինակ մը, որ մասնաւոր տպագրութիւն մը ըրաւ իմ վրայ: Առաւմտեան երիտասարդը մը, որ առեւտրով կ'զբաղէր, շատ անգամ ցաւ կը յայտնէր թէ ժամանակ չունէր ուսանելու: Ջանալի գիւրդն համոզել թէ իրօք ժամանակ ունի, սակայն զայն ի զուր կը վստահէր: Նա իւր բոլոր զօրութեամբ կընդդիմաւ նայր իմ առաւելութեանց: Յաճախ այցելութեան կերթային նմա, և զինքը բոլորովին անգործ կը գտնէի, առանց յաճախարարի և կամ խօսակցի: Բայց երբ կ'սկիզբէ խօսակցիլ ուսման վերաբերեալ

նիւթոց վրայ, անմիջապէս ի զուրս կը հեղոյր իւր սովորական ցաւէն: Այսպէս բազումը գրեթէ ունակութիւն ըրած են միայն ցաւիլ թէ ժամանակ չունին առանց երբեք լրջութեամբ քննելու թէ արդեօք իւրենց գանդ տաներ իրաւացի են: Կենաց ամեն տարիճանի մէջ կրնամք մեր գործնառական պարտաւորութիւններն անթերի կատարել վերջ՝ ժամանակ գտնել մեր անձին մշակութեան համար: Ինչ որ կը պակասի, ոչ թէ ժամանակն է, այլ կամը և հաս ուստան որոշում: Նա որ սրտազին կը փախարէ հանապաղ նոր նոր ծանօթութիւններ ստանալու, և հաստատապէս կորուցեալն կարելի միջոցներ գործածել, վրատահ է թէ միշտ ժամանակ ունի: Նա որ գիտէ ժամանակի տնտեսութիւն, կարող է ու է սրտազայներու տակ միշտ նոր քայլ մ'առնուլ զէպ յառաջ:

Մ. Կոնստանտինով

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Կ. ՊՕԼԻՍ, 7/19 ՄԱՐՏ 1879

Արտաքին բերքերուն կացութեան մէջ նշանակելի բարեփոխումը չկայ: Գիւններն այսօր աւելի տկար են քան որչափ էին 8 օր առաջ: Խաչկէները 20 փարս կորուսին, չաքարները կենդանորդ զուրս 6—8 դրոշ իջան: Բլթրօքներն աւելի տկար են քան թէ անցած: Ճէնօքայի բրինձներն հազիւ ստանդ դասն 59 ու կէս ֆարանգի, և շնդկատանի բրինձներն 132 ֆարանգի մինչև 133 դրոշ ծախուեցան: Բոլոր դաղթարեքներ և ուտեստի վերաբերեալ ապրանքներն աւելի կամ նուազ տկարութիւն կրեցին, և արտադրէ չըրապարակներն առնուած լրաց նայեցով, անկուսէ՛ դաղթելու երեսոյթ չունի: Միայն մետաղները սովորականէն աւելի հաստատուն են՝ սպաւան ժամանակին մօտենալուն պատճառաւ:

Արտաքին առեւտրը շատ բանուկ չէ: Յորեններն առատ են և կ'յնալու հակառակ: Գարին շատ վար գնով առնող կը գտնէ: Վարսակն (եռլաֆ) առնող չունի: Եղիպտացորենն իսկ, որ քիչ մը կ'ուզուէր, այժմ անտես կը մնայ և կ'յնալու վրայ է:

Տեղական սպաւան համար եկած աւելինքը բաւական զգալի կերպիւ ինկան: Միայն Օմսայէն եկող ալիւրնեւրուն գինը քիչ մը հաստատուն են՝ քան առնթիւնայի պատճառաւ չղալուն համար: Բնիկ ալիւրները 88 էն մինչև 93 դրը կը արուին, և Վաւանայի և ուրիշ տեղերու ստորին սալարանքները 80 էն մինչև 73 դրը կը գտնուին:

Գալով ներքին բերքերու, ընդհանրապէս հանդարտութիւն և զինեւրու աղկարութիւն կայ: Եւրոպայէն առնուած լուրերը նպատաւոր չեն: Վաւան եկող այծի բուրդն (թիֆթիք) օխա՞ղլու մէկ դրոշ վրայ գրած է:

ԱՐՏԱՔԻՆ ԲՆՐՔ

ԳԱՂԹԱԲԵՐՔ

Կ. 100	
Խաչկէ. Բիւս. տես. 100 օխ. 900—1000	
» Բ. » » 820—860	
» Գ. » » 750—800	
» Զանազան օխ. —	1, 104
Շաքար փոշի Հոլանտա և Թրիէսթի	
կենդ. 175—184 1.	103
» Գաղղիա » —	»
» Գլուխ 5 քիւ. —	1, 100
» 3 և 2 1/2 քիւ. 250	
1, 104	
Պղպեղ Ա. և Բ. տես. օխ. 5 1/4—5 3/8	
Մեխակ (գարէնֆիլ) » 20—22 1.	100
Խուրկ կենդանորդ 170—220 »	
Լեղակ (չիլի) Պէնկ. զան. տեսակ օխ. 90—123 »	
» Մառապա զան. » 45—60 »	
Որդան կարմիր (գրոլըզ) » 40—	1, 104
Բլթրօք (կաղ) Ամերիկա սնուուկ 571/2—58 1.	100
Սըարմալէթ 3—9 քիւ. » 87—64 »	
» 41 » » 33—88 »	
» 10—70 » » 96—100 »	
Ապակի » 13 1/2—19 ֆր.	
Թէյ, Գոնկօ օխ. 20—22 1.	103

» Բէքօ ծաղիկ » 40—100 »	
Օւլայ (նիլապիտ) Գաղ. » 5 1/2—5 3/4 1.	140
» Անդ. » սնու. 195—200 » 100	
Բրինձ ճէնօք 100 քիւ. 59 1/2—	
40 1/2 ֆր.	
» Հնդկ. » » 132—136 1.	100
» Եղիպտ. օխ. 2 7/8—5 »	
Արիւթ օ, Գաղ. և Բուս. 18—19 կաւ. 1 լիւրս	
Բուս. Անդ. և Ամեր. 9—11 » » »	
» Թրիէսթի » 16 » » »	
1, 103	
Կարադ, Արիւթ օխ. 15 1/2—15 3/4	
» Բուս. » » 10—10 1/2 1.	103
Ճարպ Բուս. տկա. » 6—6 1/2 1.	103
» Բուս. տկա. » 8—8 1/2 1.	140
Խալկար սև, Ա. տես. » 50—	120
» Բ. » » 40—45 »	
» Կարմիր » 7—	140

ՄԵՏԱՂՔ

Կ. 100	
Պողպատ (չէլիք) Թրիէս. սնու. 170—175	
Երկաթ ճողած և կենդանորդ 50—51	
» Ժար » 52—53 1.	106
» չըմանակ » 55—56 »	
» ճող. Շուէտի » 38—90 »	
» Ժար » » 92—93 »	
» տալտակ Ն 8/14 90—92 »	
Պղինձ Անդ. օխան 15—15 1/2 »	
Զինկօ 100 օխան 74—78 ֆր.	
Անագ կենդանորդ 455—440 1.	100
Անուշադր (նիլապտը) օխ. 7—7 1/4 »	
Կապար տալտակ կենդ. 155—140 1.	104
» խոլովակ օխ. 5—5 1/3 »	
Թիֆթիք 2 սնուուկ 135—190 1.	100
Գարմիչայ 50 քիւ. 70—75 »	

ԱՐՏՄԻՔ

Յորեն կարծր Աղալ. դրւ. 27—50 1.	100
» Խամայիլ » 27—30 »	
Կիրքա Աղալ. » 26—28 »	
» Գանուր » 22—26 »	
Կարծր Պալլըք Բիւլթիւն » — »	
Բոսաթ. Աղալ. » — »	
Կալուղ Գանուր » 22 1/2—26 »	
Բուս. » 21 1/2—23 1/2 »	
Եղիպտացորեն Գանուր » 14—14 1/2 »	
» Բոթի, Օրտու » 14—15 »	
» Բուս. » — »	
Գարի Գանուր » 9—11 »	
» Բուս. » 10—11 1/2 »	
Վարսակ (եռլաֆ) Անու. » 10 1/2—11 »	
» Բուս. » 11—11 1/2 »	
Հաճար (չալտար) » 15—14 »	

ԱՆԻՐ

Օտէսա, Ա. տես. 60 օխ. 124—127 1.	100
» Բ. » » 114—118 »	
» Գ. և Գ. » 95—105 »	
Խալկար, ըստ տես. » 38—105 »	
Կալուց Ա. տես. » 105— »	
» Բ. և Գ. » 33—93 »	
Բնիկ Գ. » 90—96 »	
» Կարծր » 33—92 »	

ՀԱՆԲԱԾՈՒՆ

Նիւտ-Գալթիէլ Նաու. թօնէլ. 22—	Շիւ.
» մթերանոցի » 26— »	
Գարաթի, Նաու. » 22— »	
» մթերանոցի » 26— »	
Լիվրըրու, Նաու. » 20— »	
» մթերանոցի » 24— »	
Հիւլ, Նաու. » 18—19 »	
» մթերանոցի » 22—25 »	

ՄԱՆԻՍԱԾՈՒՐԱ

Մահաթի 1, 103	
Բ. 5—9 լիւր. լիւրէն 7 1/4—7 3/4	
Մէքիլէն 5—9 » » 7 1/2—7 3/8	
Լ. օնկ Գլօթ 5—7 1/2 » » 7 3/8—	
» 6—10 » » 7 1/4—	
» 8—12 » » 7—7 1/4	

ԲԱՐՄԱՆ ԺԱՆԺ

Էքսթրա Ն. 4/6—6/8—6/14 լիւր. 48—62	
Վալէր » » 45—50 »	
Էքսթրա » 16/24 » 60—80 »	
Վալէր » » 55—60 »	

ՆԵՐՔԻՆ ԲՆՐՔ

ԶԱՆԱԶԱՆ Կ. 100	
Բալի, Առանա Թարաու օխ. 6 1/4—6 3/4	
» Եղիպտ. » 4—4 1/4 »	
» Վարսա, Պարալ. » — »	

» Պալ. Կէյլէ Մայթ օխ » 7—7 1/2	
Բուրգ լուսացուած Բուս. » — »	
» Անաուլ » 7—9 »	
» չը » Կակի Շէշիք » 4 3/4—	
5 1/4 »	
» » Եօզդ. Կենդանորդ » 4—5	
1, 140	
» » Գառապ պաշլ 7—8 1/2 »	
» այծի (թիֆթիք) Կենդանորդ օխ. »	
21—22 1.	100
» ստորին տեսակ » — »	
» Պէյալպար, Գառապ » 20—21 »	
» Վաւ. և այլն » 10—12 »	
Մորթ ոչխարի, չոր 7—12 հատ 1 լիւրս »	
» այծի » 10—13 » »	
» Կովու » օխ. 7 3/4—8 1/2 1.	120
Մետաքս Պրուսայի » — »	
» Պաթրա Կէյլէ և Պալլըք սէր օխ. — »	
» Պարսի. » օխան 16 1/2—19 ֆր.	
» Պալսար, Թորապան օխ. 59—48 »	
Խողան չոր, Պրուս. Ամերիկա և » 50—1, 140	
» Ժակած » 40— »	
Գեղին մեղրամոմ, Անու. 17—18 1.	110
Ճէշիք Կեսար. Կեն. օխ 41/2—5 1/4 1.	100
» Խողիլի և Թօթի » 5 1/2—4 1/2 »	
Գաղի խէթ (թիֆթիք) լուս. տես. 27—34 1/2 »	
Կաներ (թէնկիլ) Անու. օխ. 3 1/2—4 »	
Սև կորեակ (թէնկիլ թօթիմոմ) օխ. 1 1/4—1 1/2 »	
Ալիօն, Ա. տես. Մալթի օխ. 250—260 »	
» Պալլըք. Կէյլէ և » 190—220 »	
Կտաւա (թէնկիլ թօթիմոմ) քիլէ 27—28 »	
Սուսաթ օխան 2 3/4—3 »	
Անիսոն Գիսիլ, » 9—9 1/2 »	
» Բուս. » 7 1/2—8 »	
» Անու. » 6—6 1/2 »	
Գեման (թիֆթիք) » 6— »	
Չիլ, Միսիլի և Կարմիր օխ. 5 1/4—5 3/8 1.	110
» Կիրի » 5 3/8—5 1/2 »	
» Մուտանի » 5 1/2—5 3/4 »	
» Գիս » 6 1/2— »	
» Գան. և Վալս 5 1/4—5 1/2 »	
Օճաւ, Գանաթ օխ. 5 1/4— »	
» Հանի » 4 3/4— »	
» Բիլթի » 5— »	
» Միսիլի և Կարմիր մաքուր օխ. 4—5 1.	140
» Ստորին տես. » 5—5 1/2 »	

ԲՆԵՂԵՆՔ

Ուրն (պէլիտ) Օտէս օխան 4—1 1/2 1.	100
Կարիս, Գանուր և Տրապիզոն 100 օխան 100—140 »	
Սիսու օխ. 1 1/2—1 3/4 »	
Բակլա, Գառապ և Գիս — »	
» Պանալմա 43—50 »	

ՉՈՐ ՊՏՈՒՂՔ

Նուշ օխան 7—9 1.	100
Կաղին Տրապիզոն կենդ. 150—140 »	
Բնիկ Սնաւ. օխան 1 1/2—2 3/4 »	
Թուղ Գալմաթի կենդ. 100—103 »	
» Զիւրու » 100—120 »	
Չամիչ սև, Չիլի » 90—95 »	
» Գիս » 90—95 »	
» Կարմիր (էլիլ) օխ. 3—4 1/2 »	

Ի Լ Ա Ն

Նիւտ Կէյլէ Լիւրաք անպարը իջին չուրութեամբ մալիւմ իլէ միւլպիտ օւլունաճաղը վէ մարթը բուսինին սէքիլին՝ Բէնճէնպիլի կիւնիւ գարալը գալթիս ինքա օլունաճաղը իւրն գըլմըլ օլան ալմըլ պին գըլի Բէթիմ ասպունունուն էլլի պին գըլիսինին միւլպիտառնուն սարթը նաղարա գուսուր օն պին գըլէսինին պէշեր գըլէսի տէօրթ զրուշ իքի փարատա թալիլի Էօհանսինսէ գալմըլ վէ գարալը տալի վէրիլմըլ օլմաղա մարթըլն օնունուն Էօհան իրթիսի կիւնիւ աղչալմ գատար ուսուլ վէճիլ Էօհան պէշ թէնիլիլ թալիլ օլանալըլն Տարի Շուրպիլ ասքէրէ կէլմէլիլ:

8 մարթ 1878

Պապը Սէրասքէրի

40.1, 40.10-6. *Platanus indica* L.f. 45. *Platanus indica* L.f.